

Kudeshkina v Russia, 2009, Application No. 29492/05, Կուդեշկինն ընդդեմ

Ռուսաստանի (Մարդու իրավունքների եվրոպական դատարան)

Թեմա: արտահայտվելու ազատության իրավունքի խախտում

Ենթաթեմա: աշխատանք և արտահայտվելու ազատություն

Թեսթը: անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում

Սանկցիան: դիմումատուն ազատվել է աշխատանքից

Վճիռը: 10-րդ հոդվածի խախտում

Իրավասությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Գործի փաստական հանգամանքները.

Դիմումատուն Մոսկվայի քաղաքային դատարանի դատավոր է, որը բողոք է ներկայացրել դատարանի նախագահ տիկին Եգորովայի դեմ իր նկատմամբ ապօրինի ճնշում գործադրելու համար, երբ նա վարում էր ոստիկանության քննիչ պարոն Զայցեվի դեմ հարուցված գործը: Այն բանից հետո, երբ դիմումատուն հրաժարվել է ենթարկվել դատարանի նախագահի հանձնարարություններին, վերջինս նրան հեռացրել է այդ գործի քննությունից և այլ դատավորի է հանձնել գործի քննությունը: Այս ժամանակաշրջանում դիմումատուն իր թեկնածությունն է առաջադրել Պետական Դումայի ընտրություններում և նրա նախընտրական քարոզարշավը ներառում էր նաև դատական բարեփոխումների ծրագիրը: Որպես իր նախընտրական քարոզարշավի մաս, դիմումատուն հարցազրույցներ է տվել երկու թերթերի և մեկ ռադիոկայանի, որոնցում քննադատել է դատական համակարգը և մասնավորապես խոսել է այն իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունեցել Զայցեվի գործով: Այնուհետև, Մոսկվայի դատական խորհրդի նախագահը դիմումատուի, որպես դատավորի, լիազորությունների դադարեցման հարց բարձրացրեց: Դատական որակավորման խորհուրդը որոշեց, որ դիմումատուի հայտարարությունները պետք է որակվեն որպես կարգապահական զանցանք և դատավորի լիազորությունները պետք է դադարեցվեն: Դիմումատուն դիմել է Մոսկվայի քաղաքային դատարան, վիճարկելով այս որոշումը, այնուհետև դիմել է իր գործը այլ դատարան տեղափոխելու համար, քանի որ վերջինս անկողմնակալություն բավարար աստիճան չէր կարող ունենալ: Մոսկվայի քաղաքային դատարանը ուժի մեջ թողեց որակավորման խորհրդի որոշումը, դիմումատուն բողոք է ներկայացրել Վճռաբեկ դատարան, որը նույնպես ուժի մեջ է թողել ստորադաս դատարանի որոշումը: Դիմելով Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ դիմումատուն պնդել է, որ իրեն աշխատանքից հեռացնելը իր՝ մամուլում արված հայտարարությունների համար, հանգեցրել է իր արտահայտվելու ազատության իրավունքի խախտմանը: Նա, մասնավորապես, պնդել է, որ միջամտությունը իր արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանը, նախատեսված չէր օրենքով, չէր հետապնդում իրավաչափ նպատակ և անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում: Դիմումատուն պնդում էր նաև, որ պատշաճ չէր նաև այն փաստը, որ Մոսկվայի քաղաքային դատարանը քննել է մի գործ, որն առնչվում էր նույն դատարանի և դրա նախագահի քննադատությանը: Դիմումատուն պնդում

էր նաև, որ թէև իշխանությունները հաստատել են, որ իր լիազորությունների դադարեցումը անհրաժեշտ է եղել “դատական համակարգի հեղինակության և անկողմնակալության պաշտպանության համար”, սա վիճարկվող միջոցի իրական նպատակը չի եղել: Իրական նպատակը եղել է այն, որպեսզի ցույց տրվի դատական համակարգի բոլոր անդամներին, որ դատարանի ոչ պատշաճ գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը չպետք է բացահայտվի հանրությանը, որպեսզի դատական համայնքը պաշտպանված լինի հանրային վերահսկողությունից:

ՄԻԵԴ-ի վերլուծությունն ու եզրակացությունը.

ՄԻԵԴ-ը գտավ, որ կարգապահական սանկցիայի կիրառմամբ դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ միջամտություն է դրսևորվել, սակայն միջամտությունը նախատեսված է եղել օրենքով և հետապնդել է իրավաչափ նպատակ՝ դատական համակարգի հեղինակության և անկողմնակալության պաշտպանության և այլոց իրավունքների պաշտպանության նպատակները: Այնուհետև, Դատարանը քննարկեց այն հարցը, թե արդյոք միջամտությունը անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում: Դատարանը կրկնում է, որ “արդար դատավարությունը, տրամադրված դատական երաշխիքները և կիրառված սանկցիաների բնույթն ու խստությունը գործոններ են, որոնք պետք է հաշվի առնվեն միջամտության համաչափությունը գնահատելու համար”: Դատարանը նշում է, որ որոշելու համար, թե արդյոք առկա է եղել ճնշող հասարակական կարիք, որը կարող էր արդարացնել միջամտությունը, հստակ տարանջատում պետք է արվի փաստերի և գնահատողական դատողությունների միջև: Դատարանը, այսպիսով, դիմումատուի հայտարարությունները, որոնք բխում են իրականացված դատավարության իր փորձից, համարեց որպես փաստերի շարադրանք, որոնք տվյալ համատեքստում անտարանջատելի են եղել հարցազրույցներում արտահայտված իր կարծիքներից: Դատարանը գնահատելով դիմումատուի հայտարարությունների փաստական հիմքերը, հարցազրույցներում արտահայտված գնահատողական դատողությունների պատշաճության որոշման համար, չի համարել, որ դիմումատուի պնդումները իր նկատմամբ կիրառված ճնշումների վերաբերյալ, ներպետական դատարաններում քննության իրականացման ժամանակ համոզիչ կերպով չեն հերքվել: Այնուհետև Դատարանը նշեց, որ դիմումատուն քննադատություն է արտահայտվել շատ զգայուն հարցի վերաբերյալ, այն է՝ տարբեր պաշտոնյաների վարքագիծը, որոնք գործ են ունենում մեծածաված կոռուպցիոն գործի հետ, որի քննության ժամանակ վերջինս որպես դատավոր է իրականացրել իր գործառույթները: Այսպիսով, նա բարձրացրել է հանրային նշանակության շատ կարևոր հարց, որի քննարկումը պետք է բաց լինի ժողովրդավարական հասարակությունում: Հարցազրույցները հրապարակվել են դիմումատուի նախընտրական քարոզարշավի համատեքստում: Այնուամենայնիվ, նրա հայտարարությունները ամբողջովին զուրկ չեն եղել փաստական հիմքերից, և հետևաբար չպետք է

դիտվեն որպես անարդարացի հարձակում, այլ արդարացի մեկնաբանություն մեծ հանրային կարևորություն ներկայացնող հարցի շուրջ: Դատարանը գտավ նաև, որ Մոսկվայի քաղաքային դատարանի անկողմնակալության պակասի վերաբերյալ դիմումատուի մտավախությունները արդարացված էին, նկատի ունենալով նրա հայտարարությունները Դատարանի նախագահի դեմ: Այնուամենայնիվ, այս փաստարկները չեն հաշվի առնվել Մոսկվայի քաղաքային դատարանի կողմից և այս բացթողումը կոպիտ դատավարական խախտման է հանգեցրել: Այսպիսով, դիմումատուի նկատմամբ սանկցիայի կիրառման եղանակը չի ապահովել կարևոր դատավարական երաշխիքները: Գնահատելով դիմումատուի նկատմամբ կիրառված սանկցիան՝ Դատարանը նշեց, որ կարգապահական վարույթը հանգեցրել է դատավորի պաշտոնից զկելուն և դատավորի գործունեություն իրականացնելու որևէ հնարավորությունից զրկելուն: Սա հնարավոր առավելագույն խստության սանկցիան է, որը կարող էր կիրառվել, և Դատարանի եզրահանգումների լույսի ներքո չի համապատասխանել արարքի բնույթին: Ավելին, սա կարող է անկասկած հետ պահել մյուս դատավորներին հետագայում պետական մարմինների և քաղաքականության վերաբերյալ հայտարարություններ անել իրենց պաշտոնը կորցնելու վախից: Դատարանը, այսպիսով, գտավ, որ ներպետական իշխանությունները չեն կարողացել ճիշտ հավասարակշռություն հաստատել դատական համակարգի հեղինակության, այլոց իրավունքների պաշտպանության և դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանության միջև: Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: ՄԻԵԴ-ի վճիռը վերջնական չէ, այն հասցեագրվել է Մեծ Պալատին: